


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՈՒ Ղ Ե Յ ՈՒ Յ Յ

ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,  
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԱՎԱՌ - 2015



Ուղեցույցը մշակված է  
ԵՄ TEMPUS GOVERN ծրագրի շրջանակում և  
հաստատված է ԳՊՀ գիտական  
խորհրդի կողմից 2015թ.  
սեպտեմբերի 26-ի թիվ 7 նիստում:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
Համալսարանի ուսանողների իրավունքները.....	5
Համալսարանի ուսանողների պարտականությունները.....	6
Համալսարանում գործող ուսանողական ինքնակառավարման մարմինները.....	7
Ուսանողների մասնակցությունը Համալսարանի կառավարման մարմիններում և նրանց դերը ուսումնական գործընթացում.....	16

## Ներածություն

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ուսանողները բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար Համալսարան ընդունված անձինք են:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի հիմնական շահառուն ուսանողն է, ով ունի որակյալ մասնագիտական կրթություն ստանալու սահմանադրական իրավունք:

Համալսարանի ուսանողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, այլ ներքին իրավական ակտերով:

Գիտակցելով դասախոսակենտրոն ուսուցման պակաս արդյունավետությունը՝ Գավառի պետական համալսարանում անցում է կատարվել նոր որակի կրթական համակարգի, որի առանցքն ուսանողն է և կրթության նկատմամբ նրա վերաբերմունքը, այսինքն՝ կարևորվել է ուսանողակենտրոն ուսուցման համակարգը:

Համալսարանում ուսանողները լիիրավ մասնակցում են բուհի կոլեգիալ կառավարման մարմինների աշխատանքներին:

Համալսարանում հետևողական աշխատանքներ են իրականացվում ուսանողական ինքնակառավարման մարմինների դերի շարունակական բարձրացման, ուսանողական ինքնակառավարման զարգացման, ուսանողներին համալսարանական բոլոր կարևոր խնդիրների լուծման և որոշումների ընդունման գործընթացներում ներգրավման ուղղությամբ: Այս նպատակով պարբերաբար կազմակերպվում են ուսանողների հանդիպումներ Համալսարանի ղեկավարության հետ: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվում են բուհում ուսանողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ քննարկումներ, և արդյունքները ամփոփում ու ներկայացնում են Համալսարանի ղեկավարությանը, ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

Սույն ուղեցույցը բովանդակում է Համալսարանի ուսանողների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, նախատեսում Համալսարանի ուսանողական ինքնակառավարման մարմինների խնդիրներն ու գործառույթները՝ ուսանողներին իրազեկելու և ճիշտ ուղղորդելու նպատակով:

# I. Համալսարանի ուսանողների իրավունքները

## 1. Համալսարանի ուսանողներն իրավունք ունեն.

- 1) ստանալու գիտության, տեխնիկայի և մշակույթի ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ, հաճախելու Համալսարանում կազմակերպվող դասընթացներին,
- 2) մասնակցելու իրենց կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները,
- 3) մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,
- 4) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է Համալսարանում՝ ըստ սահմանված կարգի,
- 5) հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական (զուգահեռ) ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան,
- 6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ընդգրկվելու և մասնակցելու Համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին,
- 7) օգտվելու Համալսարանի գրադարանից, ընթերցասրահից, ուսումնական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,
- 8) ըստ նախասիրությունների՝ մասնակցելու Համալսարանում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին,

- 9) միավորվելու ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և այլ ուսանողական կազմակերպություններում,
- 10) բողոքարկելու Համալսարանի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 11) օգտվելու ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 12) սահմանված կարգով մասնակցելու ուսանողների փոխանակման միջազգային ծրագրերի,
- 13) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2. Համալսարանում կրթությունն ընդհատած նախկին ուսանողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի վերականգնելու իր ուսանողական իրավունքները:

## **II. Համալսարանի ուսանողների պարտականությունները**

### **1. Համալսարանի ուսանողները պարտավոր են.**

- 1) սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները,
- 2) տիրապետել բարձր որակավորում ունեցող ապագա մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին,
- 3) անշեղորեն կատարել Համալսարանի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների և այլ իրավական ակտերի պահանջները,
- 4) հաճախել ուսումնական ծրագրերով նախատեսված դասընթացներին,

- 5) վճարովի հիմունքներով կրթություն ստանալու դեպքում՝ ժամանակին վճարել ուսման վարձավճարը,
- 6) հոգատար վերաբերվել Համալսարանի գույքին,
- 7) բարձր պահել Համալսարանի պատիվն ու հեղինակությունը,
- 8) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, այլ ներքին իրավական ակտերով նախատեսված պարտականությունները:

2. Այն ուսանողները, ովքեր չեն կատարում Համալսարանի կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով սահմանված պարտականությունները, ցուցաբերում են անբավարար ակադեմիական առաջադիմություն, կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև Համալսարանից հեռացում:

### **III. Համալսարանում գործող ուսանողական ինքնակառավարման մարմինները**

1. Համալսարանում ակտիվորեն գործում են ուսանողական խորհուրդը, ուսանողական գիտական ընկերությունը, իրավաբանական կլինիկան, տնտեսագետների, բանասերների, ստեղծագործողների ակումբները, նկարչական ստուդիան:

2. Ուսուցման կազմակերպման ու որակի ապահովման գործընթացներում, ինչպես նաև ուսանողների արդյունավետ գործունեությանը, նրանց մասնագիտական, հոգևոր և ստեղծագործական զարգացմանը նպաստելու համար Համալսարանում կարևորվում է ուսանողական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) դերը:

3. Խորհուրդը Համալսարանի ուսանողական ինքնակառավարման, սովորողներին (բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում, ինչպես նաև առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողներին) միավորող, նրանց շահերը պաշտպանող, ընտրովի ներկայացուցչական մարմին է:

Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, Համալսարանի Կանոնադրությանը և Խորհրդի կանոնադրությանը համապատասխան: Խորհուրդը համակարգում է ուսանողական ինքնակառավարման գործընթացները Համալսարանի սովորողների շրջանում, արտահայտում և պաշտպանում է նրանց իրավունքները և օրինական շահերը, նպաստում անհատի համակողմանի զարգացմանը, ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակմանը, ստեղծում կապեր ՀՀ և արտերկրի բուհերի գիտական, կրթական, երիտասարդական, մշակութային և այլ կազմակերպությունների հետ:

4. Համալսարանի կառավարման մարմինների, նրանց ստորաբաժանումների, Համալսարանում գործող, ինչպես նաև արտահամալսարանական գիտական, կրթական, մշակութային, հոգևոր, բարեգործական և այլ կազմակերպությունների, պետական մարմինների և անհատ անձանց հետ Խորհրդի հարաբերությունները կարգավորվում են Համալսարանի կանոնադրության, Խորհրդի կանոնադրության և պայմանագրերի հիման վրա: Խորհրդի կողմից կնքված պայմանագրերը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իրավական ուժ են ստանում Համալսարանի ռեկտորի կողմից վավերացվելուց հետո:

5. Խորհուրդն ակտիվորեն համագործակցում է Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, ՀՀ Գեղարքունիքի մարզի երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ:

6. Խորհուրդն ունի հետևյալ խնդիրները.

1) աջակցություն ուսումնական գործընթացի բարելավման, ուսանողների առաջադիմության բարձրացման, հետազոտական աշխատանքների կազմակերպման գործընթացներին,



- 2) սովորողների շրջանում տեղեկատվության տարածում, պարբերականների հրատարակում,
- 3) սովորողների ստեղծագործական ներուժի բացահայտման համար պայմանների ստեղծում,
- 4) Համալսարանի կառավարման մարմիններում սովորողների շահերի ներկայացում և պաշտպանություն,
- 5) համապատասխան միջոցների ձեռնարկում, որոնք կնպաստեն ուսանողների և դասախոսների համագործակցության արդյունավետության բարձրացմանը,
- 6) ուսումնական մասնաշենքերում կարգուկանոնի պահպանությանն աջակցություն,
- 7) սովորողների սոցիալական վիճակի հաշվառմամբ՝ նրանց աջակցության ծրագրերի մշակում և իրականացում,
- 8) Համալսարանի ուսանողական կառույցների աշխատանքներին նպաստող այլ միջոցառումների ձեռնարկում,
- 9) Հանրապետության և արտասահմանյան երիտասարդական, ուսանողական կազմակերպությունների հետ կապերի ստեղծում և զարգացում,
- 10) միջհամալսարանական ուսանողական համագործակցության զարգացում, աջակցություն ուսանողների փոխանակմանը,
- 11) ուսուցման որակի բարձրացման և ծրագրային նորացման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում և ներկայացում, դրանց ընդունմանն ու հետևողական իրականացմանը նպաստում,
- 12) շրջանավարտների աշխատանքի տեղավորմանն աջակցություն,
- 13) Համալսարանի շրջանավարտների և գործատուների միջև փոխադարձ կապերի ապահովում,
- 14) Համալսարանում սովորողների ֆիզիկական դաստիարակության և մարզաձևերի զարգացմանն աջակցություն,

15) ուսանողական բազմաբնույթ միջոցառումների անցկացում,

16) համակողմանի աջակցություն շնորհալի ուսանողների առաջընթացին:

7. Սահմանված նպատակներին հասնելու և առաջադրված խնդիրների լուծման համար Խորհուրդն իրավասու է.

1) որոշելու իր կառուցվածքը,

2) կազմակերպելու համատեղ աշխատանք պետական և հասարակական կազմակերպությունների հետ և մասնակցելու դրանց՝ իր ներկայացուցիչ պատվիրակների միջոցով,

3) մշակելու նախագծեր՝ երիտասարդական հիմնադրամներից և այլ արտաքին ֆինանսական աղբյուրներից դրամաշնորհներ ստանալու համար,

4) մշակելու և իրականացնելու միջոցառումներ ուսանողների՝ Համալսարանի կանոնադրությամբ նախատեսված իրավունքների պաշտպանության համար,

5) օգտագործելու Համալսարանի տեղեկատվական հնարավորությունները՝ ուսանողական կյանքը համակողմանիորեն լուսաբանելու և Խորհրդի որոշումներն օպերատիվ կերպով ուսանողությանը հասցնելու համար,

6) ստեղծելու Համալսարանի կանոնադրությամբ չբացատվող ուսանողական, մշակութային, մարզական միություններ, ըստ նախասիրությունների՝ ակումբներ, կազմակերպելու ուսանողական օլիմպիադաներ, գիտաժողովներ, փառատոներ, համերգներ, հանդեսներ և ուսանողական առօրյան հետաքրքիր դարձնող այլ միջոցառումներ,

7) մասնակցելու ուսանողների շահերին առնչվող ակտերի մշակմանը, կատարելագործմանն ու ընդունմանը,

8) Համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնելու ուսանողության հիմնահարցերը,

9) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Համալսարանի կանոնադրության համաձայն ունենալու սովորողների ներկայացուցիչներ Համալսարանի կառավարման մարմիններում՝ ապահովելով ուսանողների

մասնակցությունը Համալսարանի (ֆակուլտետների, բաժինների) գործունեությանը վերաբերող կարևոր հարցերի լուծմանը,

10) մասնակցելու սովորողների կրթաթոշակների նշանակման, սոցիալական օգնության, արտասուսումնական միջոցառումների ծրագրման գործընթացներին,

11) առաջարկություններ ներկայացնելու՝ ներհամալսարանական նշանակության անվանական կրթաթոշակներ և մրցանակներ հիմնելու վերաբերյալ,

12) մասնակցելու սովորողների ակադեմիական առաջադիմության և կարգապահական հարցերի քննարկման և որոշումների կայացման գործընթացներին,

13) ընդգրկվելու սովորողների ուսուցմանը, կենցաղի և հանգստի կազմակերպմանը վերաբերող հարցերի մշակմանը, քննարկմանն ու որոշումների ընդունմանը,

14) միջնորդելու Համալսարանի ղեկավարությանը՝ զեղչելու սոցիալապես անապահով ընտանիքների, ուսման բարձր առաջադիմություն, օրինակելի վարք ունեցող ուսանողների ուսման վարձը,

15) միջնորդելու Համալսարանի հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն ունեցող ուսանողների պարզևատրման համար,

16) առաջադրված խնդիրների լուծման համար Խորհրդի կազմը համալրելու նոր անդամներով,

17) սահմանված կարգով բողոքարկելու սովորողներին վերաբերող համալսարանական հրամաններն ու կարգադրությունները,

18) իր իրավասության շրջանակներում լուծելու այլ հարցեր:

8. Համալսարանի ֆակուլտետների ուսանողական խորհուրդներն իրականացնում են հետևյալ գործառույթները.

- 1) սահմանված կարգի համաձայն՝ առաջադրում են Համալսարանի ուսանողական համակարգից Համալսարանի Խորհրդի անդամների թեկնածուներ,
- 2) սահմանված կարգի համաձայն՝ ներկայացնում են անդամներ Համալսարանի ֆակուլտետների խորհուրդների կազմում,
- 3) սահմանված կարգի համաձայն՝ առաջադրում են ներկայացուցիչներ Համալսարանի ուսանողական խորհրդի կազմում,
- 4) վերահսկում և կազմակերպում են ուսանողների իրավունքների և պարտականությունների պատշաճ կատարումը,
- 5) կենսագործում են Խորհրդի և նախագահության որոշումները,
- 6) մշտական կապ են պահպանում դեկանատների և կուրսղեկների հետ, մասնակցում են դեկանատների կողմից կազմակերպվող աշխատանքների իրականացմանը, աշխատանքային հարցերի քննարկմանը,
- 7) կիսամյակը մեկ անգամ կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Խորհրդին կամ նախագահությանը,
- 8) իրենց իրավասությունների շրջանակներում լուծում են այլ հարցեր:

9. Համալսարանը ոչ միայն բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման, այլև գիտահետազոտական աշխատանքների կենտրոն է, որտեղ ուսանողները ակտիվորեն ներգրավված են գիտահետազոտական աշխատանքներում: Այս աշխատանքները համակարգում է Համալսարանում գործող Ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն կամ ՈԻԳԸ), որը սատարում է գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնություններին և կազմակերպում ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ, քննարկումներ, գիտահանրամատչելի դասախոսություններ և այլ գիտական ու կրթական ուղղվածություն ունեցող միջոցառումներ: Ընկերությունը համագործակցում է այլ գիտական կենտրոնների հետ և նրանց հետ կազմակերպում

համատեղ միջոցառումներ, «Կլոր սեղան» քննարկումներ, հանրապետական գիտաժողովներ:

10. Ընկերության կառուցվածքային մարմինները ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերություններն են, որոնք ձևավորվում են ամբիոնների երաշխավորությամբ ներկայացված առնվազն երեք ուսանողներից: Ֆակուլտետի ՈԻԳԸ-ն մշակում և իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են Ընկերության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը: Ֆակուլտետի ՈԻԳԸ-ի առաջադրմամբ ֆակուլտետի խորհուրդը հաստատում է ֆակուլտետի ՈԻԳԸ-ի նախագահի և քարտուղարի թեկնածությունները, որոնք կազմակերպում են ֆակուլտետի ՈԻԳԸ-ի աշխատանքները, համակարգում են նրա գործունեությունը, ներկայացնում ֆակուլտետի ՈԻԳԸ-ն և նրա ծրագրերը Ընկերության գիտական խորհրդում: Ֆակուլտետի ՈԻԳԸ-ն կազմակերպում է ուսանողական մասնագիտական ակումբներ, որոնց կազմում ընդգրկվում են ֆակուլտետի այլ ուսանողներ:

11. Ընկերության գիտական խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները.

- 1) քննարկում և որոշում է Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, միջոցներ է ձեռնարկում որոշումների իրականացման համար,
- 2) առաջարկություններ է ներկայացնում Ընկերության գիտական խորհրդին, Խորհրդին, Համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումներին,
- 3) ի գիտություն է ընդունում Ընկերության նախագահի տարեկան հաշվետվությունը,
- 4) մշակում է Ընկերության հեռանկարային և ընթացիկ ծրագրերը, հաստատում և համակարգում է ֆակուլտետային ՈԻԳԸ-ների աշխատանքները և ծրագրերը,
- 5) հաստատում է իր աշխատակարգը,

6) ստեղծում, վերակազմավորում և լուծարում է համապատասխան կանոնադրությամբ սահմանված՝ Ընկերության աշխատանքային մարմինները, հաստատում նրանց կազմը և աշխատակարգը, ինչպես նաև նրանց կարող է վերապահել իր իրավասությանը վերաբերվող որոշ հարցերի լուծման իրավունք,

7) որոշում է ընդունում շնորհել Ընկերության պատվավոր անդամի կոչում և կանոնակարգում է Ընկերության անդամությանը վերաբերվող այլ հարցեր,

8) վավերացնում է Ընկերության անունից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը:

12. Ընկերության նախագահն ի պաշտոնե հանդիսանում է ԳՊՀ գիտական խորհրդի անդամ: Ընկերության նախագահն ի պաշտոնե ներկայացնում է Ընկերությունը, համակարգում Ընկերության գիտական խորհրդի գործունեությունը, ապահովում է Ընկերության մարմինների համագործակցությունը, տալիս է լիազորագրեր, Ընկերության անունից կնքում պայմանագրեր և համաձայնագրեր: Ընկերության նախագահը տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս ԳՊՀ գիտական խորհրդում:

13. Ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության և բացահայտման արդյունքում Համալսարանում իրականացվում են օտար լեզվի, համակարգչային հմտությունների, կերպարվեստի, դեկորատիվ և կիրառական դիզայնի հիմունքների, տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի և այլ դասընթացներ:

14. Կոռուպցիոն վտանգների կանխման նպատակով Համալսարանի գիտական խորհրդի կողմից ընդունվել է «ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգը»: Հայեցակարգը հստակ սահմանել է, որ Համալսարանում անընդունելի են ակադեմիական անազնվության բոլոր դրսևորումները, կոռուպցիոն երևույթները, իսկ բարոյական և իրավական նորմերով արգելված արարքներ կատարած անձանց համար նախատեսված են պատասխանատվության միջոցներ:

15. Ակադեմիական ազնվության հայեցակարգին համապատասխան՝ ձևավորվել է ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողով, որը բաղկացած է դասախոսներից և ուսանողներից և քննում է հայեցակարգի խախտման, իրավական նորմերի և էթիկայի կանոնների ոտնահարման դեպքերն ու համապատասխան եզրակացություն է ներկայացնում ռեկտորին:

16. Ուսանողները Համալսարան ընդունվելիս՝ ստորագրում են «ԳՊՀ ուսանողի խարտիան», որը կոչ է անում դավանել բարձր բարոյական արժեքների, սովորել պատասխանատվության զգացումով և կրթության կարևորության գիտակցումով, առանց որևէ մեկի միջնորդության ու հովանավորության գնահատականներ վաստակել արդար ու ազնիվ ճանապարհով, չմատուցելով նյութական և այլ բնույթի ծառայություններ, չշիմելով անընդունելի միջոցների:

17. Համալսարանում ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի կազմում ուսանողներին ընտրում են Համալսարանի Խորհրդի անդամները՝ փակ, գաղտնի քվեարկությամբ: Նրանց թեկնածությունները հաստատվում են ուսանողական խորհրդի կողմից՝ ըստ ուսանողների ներկայացրած շարադրությունների, որի թեման նախապես հայտարարվում է:

18. Ընտրության կարգը սահմանում է ուսանողական խորհուրդը՝ ապահովելով փակ, գաղտնի քվեարկության սկզբունքների պահպանումը:

19. Ուսանողներն անկաշկանդ կարող են իրենց բողոքները ներկայացնել Համալսարանի ռեկտորին, պրոռեկտորներին, ֆակուլտետի դեկանին, փոխդեկանին, ամբիոնների վարիչներին, կուրսղեկներին՝ պաշտպանելով իրենց իրավունքները: Նրանք իրենց հուզող հարցերը կարող են բարձրացնել նաև պարբերաբար անցկացվող անանուն հարցումների, «վստահության արկղիկի», «Թեժ գծի» միջոցով:

20. Ուսանողներն օգտվում են իրենց ընձեռված հնարավորություններից, ազատ արտահայտում իրենց դժգոհությունները, բողոքները, որոնց ընթացք և լուծում է տրվում Համալսարանի ռեկտորի հրամանով կազմված ֆակուլտետային կամ

համալսարանական հանձնաժողովների կողմից՝ ըստ համապատասխան ընթացակարգերի:

21. Ուսանողներն իրենց իրավունքները կարող են պաշտպանել նաև համալսարանական կառույցներում /ԳՊՀ խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետային խորհուրդ, ռեկտորատ, ուսանողական խորհուրդ և այլն/ ընդգրկված իրենց ուսանող ներկայացուցիչների միջոցով:

22. Համալսարանում բոլոր գործընթացները թափանցիկ են ու կանխատեսելի, հրապարակային և օբյեկտիվ: Գործում է հաշվետվողականության հստակ համակարգ, ապահովվում են հակադարձ կապեր ԳՊՀ խորհրդի, գիտխորհրդի, ռեկտորատի, ուսանողների և նրանց ծնողների միջև:

#### **IV. Ուսանողների մասնակցությունը Համալսարանի կառավարման մարմիններում և նրանց դերը ուսումնական գործընթացում**

##### **1. Համալսարանի ուսանողները**

1) ընդգրկվում են Համալսարանի խորհրդում, գիտական խորհրդում, ֆակուլտետների խորհուրդներում և որակի ապահովման հանձնաժողովում,

2) ներգրավվում են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով ուսանողական հարցումներին, ապա և շրջանավարտների՝ բուհում ստացած կրթությունից բավարարվածության հարցումներին,

3) մասնակցում են Համալսարանում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) որակի ապահովման գործընթացներին՝ որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն և այլն) ներկայացուցիչներ,

4) համաձայն սահմանված ընթացակարգի՝ մասնակցում են ֆակուլտետների ինքնագնահատման, ինքնավերլուծության գործընթացին,



5) ընդգրկվում են Համալսարանում ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի կազմում,

6) ընդգրկվում են բողոքարկման հանձնաժողովների կազմում:

2. Կրթության որակի ապահովման նպատակով կազմակերպվող մշտադիտարկումը ներառում է նաև ուսանողների՝ ՄԿԾ-ներից բավարարվածության ուսումնասիրությունը: Ուսանողական հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ կետի և Համալսարանի կանոնադրության 55-րդ կետի դ) ենթակետի պահանջների հիման վրա և համարվում է Համալսարանի ուսանողության՝ ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և պրոֆեսորադասախոսական ու վարչական անձնակազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում: Անձնակազմի մասնագիտական որակների գնահատումը և ուսանողների կարծիքների հաշվառումը իրականացվում է տարին երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում: Հարցումը նպատակ ունի գնահատելու պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմերի, դասավանդման որակի, ուսուցման գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետությունը: Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են ամբիոններում, ֆակուլտետի խորհրդում, ռեկտորատի, գիտական խորհրդի նիստերում: Քննարկման արդյունքում արվում են եզրահանգումներ ու առաջարկություններ, և դրանց համապատասխան մշակվում և իրականացվում են միջոցառումներ՝ շտկումներ ու բարեփոխումներ կատարելու նպատակով:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների վերաբերյալ ընդունված կանոնակարգերն ու ընթացակարգերը հնարավորություն են տալիս անմիջականորեն արձագանքելու ուսանողության կողմից բարձրացված խնդիրներին և շուտափույթ լուծումներ տալու դրանց:

3. Համալսարանում ուսուցման գործընթացը կազմակերպվում է կրեդիտային համակարգով, ուստի սահմանվում են տվյալ ՄԿԾ-ով նախատեսված որակավորման

շնորհման համար անհրաժեշտ կրեդիտների քանակը, այդ կրեդիտները ձևավորող դասընթացների և կրթական մոդուլների բովանդակային կազմը՝ ծրագրի պարտադիր և ընտրովի առարկայացանկի համակցությամբ, դասընթացներին հատկացված կրեդիտները և ուսուցման ժամանակահատվածի նվազագույն տևողությունը:

4. Ուսանողն ընտրում է տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են համապատասխան ֆակուլտետը (ուսումնական ստորաբաժանումը) և ամբիոնը, մասնակցում է իր կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները, բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնում ցանկացած այլ դասընթաց՝ Համալսարանում սահմանված կարգով:

